

ՄԱՍՆԱՎՈՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արտակ Ղազարյան

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ասպիրանտ

Հայտնի է, որ վաղնջական ժամանակներում, ինչպես նախքան պետության, պետական իշխանության ծագումը, այնպես էլ դրանց կայացման սկզբնական շրջանում, գոյություն ուներ հանցագործության մասնավոր-իրավական ընկալում, համաձայն որի՝ հանցագործությունը ոչ թե վնասում էր հանրությանն ընդհանրապես, այլ կոնկրետ անձին, նրա ընտանիքին (տոհմին, ցեղին), և հետևաբար՝ ոչ թե ամբողջ հանրության, այլ հանցագործությունից տուժողի (նրա ընտանիքի, տոհմի, ցեղի անդամների) խնդիրն էր դառնում հանցագործությանն արձագանքելը: Ուստիև հանցագործության այսպիսի մասնավոր-իրավական ընկալման պայմաններում հանցագործությանն արձագանքելը՝ պատժելը, նույնպես մասնավոր բնույթ էր ստանում՝ որոշ դեպքերում հազուրդ տալով լոկ տուժողի (նրա մերձավորների, հարազատների) բավարարվածությանը (privatsatisfaction):

Սա նկատի ունենալով՝ Ա.Վ. Ֆոն Ռեզոնը գրում է. «Նախկին ժամանակներին հայտնի էին մասնավոր հանցագործություններ՝ delicta privata, privatverbrechen, որոնք ոչ թե ընդհանուր հասարակական կարգի, այլ մասնավոր անձանց իրավունքների ու շահերի խախտումներ էին, այդ պատճառով դրանց պատիժները ձեռք էին բերում ոչ թե խախտված օբյեկտիվ կարգը վերականգնելու, այլ տուժողի մասնավոր վարձահատույց լինելու նպատակ՝ poena privata և չէին առաջացնում ոչ մի հասարակական հետևանք»¹:

Հանցագործության մասին վաղ ժամանակների այդպիսի հայացքներն ունեին իրենց պատճառները:

Նախքան պետության ծագումը եղած հանցագործության մասնավոր պատկերացումները հաջող է բնորոշել Ա.Ֆ. Կիստյակովսկին, ըստ որի՝ այդ ժամանակներում հանցագործությունը չէր կարող ընկալվել այլ կերպ, քան մասնավոր իրավախախտում, քանի որ չկար այնպիսի իշխանություն, որը կկարողանար հանցագործությանն ու պատժին անձնական և տոհմային, ցեղային շահերից վեր բնույթ տալ²:

Սակայն պետության ծագումը դեռևս բավարար չէր այդպիսի ընկալումների անմիջապես վերացման համար: Բանն այն է, որ շատ դեպքերում ստեղծվող պետությունները արտաքին վտանգներից պաշտպանվելիս էին միայն կենտրոնացնում իրենց ջանքերը և այդ իսկ պատճառով դեռևս «ներսում» մասնավոր անձանց հարաբերությունները կարգավորելու բավարար «ներուժ» չունեին:

Ահա թե ինչ է ասում այս մասին ականավոր ցիվիլիստ Ի.Ա. Պոկրովսկին. «Իրավական պատմության համեմատական հետազոտման առավել արժեքավոր արդյունքներից մեկն էլ այն փաստի հաստատումն է, որ վաղնջական ժամանակներում իրավունքի պաշտպանությունը շահագրգիռ անձանց մասնավոր գործն էր: Դեռ նոր ծնվող պետական իշխանությունն ի սկզբանե սահմանափակվում է արտաքին անվտանգության խնդիրներով և մասնավոր անձանց ներքին հարաբերություններին ընդհանրապես չի խառնվում: Դա հավասարապես վերաբերվում է ինչ-

¹ Տե՛ս **Фон-Резон А. К.** О преступлениях, наказуемых только по жалобе потерпевшего по русскому праву. - СПб., 1882, էջ 2:

² Տե՛ս **Кистьяковский А.Ф.** О пресечении обвиняемому способов уклоняться от следствия и суда. СПб., 1868, էջեր 9-10:

պես քրեական իրավախախտումների, այնպես էլ քաղաքացիական իրավունքների ոլորտներին... Քրեական իրավունքի ոլորտում հնագույն ժամանակը մասնավոր վրեժի (ինքնադատաստանի - Ա.Ղ) շրջանն է, քաղաքացիական իրավունքների ոլորտում դրան համապատասխանում է մասնավոր կամայականության ժամանակահատվածը»¹:

Հանցագործության (*delicta privata*) և պատժի (*poena privata*) մասնավոր-իրավական ընկալումները ծնունդ են տալիս մասնավոր մեղադրանքին. հետապնդման իրականացումն ամբողջովին վերապահվում է մասնավոր անձին հանցագործությունից տուժողին (նրա ընտանիքի անդամներին և այլն)՝ հանուն իր (իրենց) մասնավոր շահերի պաշտպանության:

Այս ամենն իր հերթին հանգեցնում էր նրան, որ.

1. Մասնավոր մեղադրանքն ամբողջությամբ ենթարկվում էր տուժողի կամքին (քանի որ այն իրականցվում էր հենց տուժողի շահերից ելնելով), մեղադրանքը տնօրինում էր ինքը, և այդ «սկզբնական» դատավարությունում ստեղծվում էր կողմերի ինքնագործունեության անսահման հնարավորություն:

2. Քրեական դատավարությունում տեղ չէր թողնվում հանրայնության համար՝ այն ողողելով դիսպոզիտիվությամբ:

Ուստիև հանցագործության և պատժի մասնավոր իրավական ընկալումների պայմաններում մասնավոր մեղադրանքի «գործառնության» դատավարական միակ² հնարավոր մոդելը մեղադրական (մրցակցային) դատավարությունն էր³:

Այսպիսով հանցագործության և պատժի մասնավոր իրավական ընկալումները հանգեցնում են մասնավոր մեղադրանքի, ինչն էլ, իր հերթին, այդ պայմաններում հնարավոր է լինում կազմակերպել միայն մեղադրական (մրցակցային) դատավարությամբ:

Սակայն, ինչպես ցույց է տալիս պատմությունը, հանցագործության և պատժի սաղմնային նման պատկերացումները աստիճանաբար, պետական իշխանության ամրապնդմանը զուգահեռ սկսում են իրենց տեղը զիջել հանցագործության և պատժի հանրային իրավական ընկալումներին: Աստիճանաբար գիտակցվում է հանցագործության հանրային վտանգավորությունը:

Այս առնչությամբ Հռոմեական հանրապետության մասին խոսելով՝ Ի.Ա.Պոկրովսկին նշում էր, որ երբ ամրապնդվող պետական իշխանությունը սկսում է ուշադրություն դարձնել պետության ներքին կառուցվածքին, մասնավոր անձանց, նրանց ընտանիքների ու ցեղերի ցանկացած (քրեական և քաղաքացիական) արարքների հետ կապված իրական հակամարտություններն ու վեճերը վերջինիս համար, անկասկած, դառնում են անցանկալի երևույթներ: Եվ հենց այդ ժամանակ էլ իրավա-

¹ St' u **Покровский И.А.** Право и факт в римском праве. Часть 2, Генезис преторского права. – Киев, 1902, էջ 66: Վաղ ժամանակներում հանցագործության և պատժի մասնավոր իրավական ընկալման մասին տե՛ս նաև **Случевский В.** Учебник русского уголовного процесса. Судостроительство-судопроизводство (издание 4-е, дополненное и исправленное). - С.-Петербург, типография М. М. Стасюлевича, 1913, էջ 36, **Фойницкий И. Я.** Курс уголовного судопроизводства. Том I (издание 4-е). С.-Петербург, типография товарищества "Общественная польза", 1912, էջեր 8, 68-69:

² Խոսքը հիմնական մասնավոր մեղադրանքի մասին է:

³ Խոսելով հայցային դատավարության և մասնավորապես հայցի մասին՝ Ա.Կ.Սմիրնովը նշում է. «Եթե դիմենք այս ինստիտուտի պատմական և հոգեբանական հիմքերին, ապա պաշտպանության հայցային ձևն իրենից ներկայացնում է հնագույն թալիոնի սկզբունքի արձագանք՝ դրա դատավարական արտապատկերով: Պատասխանողը կամ մեղադրյալը, այսինքն՝ ենթադրյալ «վիրավորողը», բերվում է «գանահարության» դատարանի առջև՝ վերածվելով պաշտպանվող կողմի ու այդպիսով տուժողի հետ հակառակ ճշգրտությամբ «տեղերը փոխվելով» (St' u **Смирнов А.В.** Модели уголовного процесса.- СПб.: «Наука», ООО «Издательство "Альфа"», 2000, էջ 32):

կան պաշտպանության նախկին, անկազմակերպ կարգի փոխարեն ձևավորվում է նորը¹:

Աստիճանաբար մարդկանց մտապատկերում ձևավորվում են ողջ հասարակությանը հանցագործությամբ վնաս պատճառելու ընկալումը, դրա հանրայնության գիտակցումը:

Այսպիսի աստիճանական իմաստավորումը մասնավոր հանցագործությունների կողքին (*delicta privata*) ծնունդ է տալիս այսպես կոչված հանրային հանցագործություններին, հռոմեական իրավունքի տերմինաբանությամբ՝ *delicta publica*-ին:

Մյուս կողմից՝ հանցագործության հանրային-իրավական նշանակության գիտակցումը, իր հերթին, չէր կարող հետք չթողնել այդպիսի հանցագործություններով («հանրային հանցագործություններով») քրեական հետապնդման իրացման վրա՝ առաջ բերելով ինչպես մեղադրանքի կազմակերպման այլ եղանակներ, այնպես էլ հանգեցնելով ընդհանրապես քրեական դատավարության հանրայնացմանը:

«Քրեական դատավարության պատմությունը սկսվում է դրանում մասնավոր ելակետի գերիշխանությամբ և քրեական դատավարության ու քաղաքացիական դատավարության ամբողջական համընկմամբ. կողմերի հայեցողությունը և գործի քննության ձևականացումը դառնում են դրա բնութագրական հատկանիշներ: Աստիճանաբար հստակեցվում և զարգանում է քրեական դատավարության հանրային սկիզբը, այն դառնում է հասարակության, պետության գործը...»²:

Այսպես օրինակ՝ Հին Հռոմում եթե մասնավոր հանցագործություններով հետապնդումն իրականացվում էր հանցագործից տուժած մասնավոր անձի (նրա ընտանիքի անդամների) կողմից, ապա արդեն հանրային հանցագործությունների դեպքում «արքան ինքն էր քրեական հետապնդում հարուցում և մեղավորներին դատարան կանչում: Այս դեպքերում դատավարությունը կոչվում էր պետական (ի տարբերություն մասնավորի)»³:

Հանրային շահի գիտակցումն իր հերթին պայմանավորում է պետության հանրային իրավական մարմինների ստեղծման անհրաժեշտությունը, որոնց վրա դրվում է յուրաքանչյուր հանցագործության դեպքում ի պաշտոնե քրեական հետապնդում իրականացնելու պարտականություն: Սա ակնհայտ փաստ է, բայց մեր հետազոտման այս մասի համար նշանակություն չունեցող: Մեզ այստեղ հետաքրքրում է ուրիշ հարց. արդյո՞ք հանցագործության և պատժի հանրային իրավական ընկալումները միայն պրոֆեսիոնալ (հանրային մարմինների կողմից իրականացվող) մեղադրանքի կազմակերպման հնարավորություն են ընձեռում ու բացառում են մասնավոր (ոչ պրոֆեսիոնալ) անձանց կողմից իրականացվող մեղադրանքի կազմակերպման հնարավորությունը: Այլ կերպ ասած՝ արդյո՞ք քրեական հետապնդման կազմակերպումը մասնավոր անձի կողմից վկայում է հանցագործության հանրային-իրավական նշանակության գիտակցության բացակայության մասին:

Հարցին, մեր համոզմամբ, պետք է տալ ժխտողական պատասխան: Այն գիտակցումից, թե հանցագործությամբ վնաս է պատճառվում ոչ միայն տուժողին (չէ՞ որ այն այլևս չունի մասնավոր բնույթ), այլև հանրությանը, հին հասարակությունում սկսում է ձևավորել մի իրավացի մոտեցում, ըստ որի՝ հենց հանրությունն էլ, հանձինս իր անդամների (քաղաքացիների կամ որոշ դեպքերում դրանց միավորումների), պետք է իրավունք ունենա հետապնդելու ենթադրյալ հանցանք կատարած անձին՝ ի պաշտպանություն հենց հանրային շահի:

¹ Տե՛ս Покровский И.А., նշվ. աշխ., էջ 66:

² Տե՛ս Фойницкий И. Я., նշվ. աշխ., էջ 16:

³ Տե՛ս Чельцов-Бебутов М.А. Курс советского уголовно-процессуального права. Очерки по истории суда и уголовного процесса в рабовладельческих, феодальных и буржуазных государствах. М., 1957, էջ 128:

Եվ հասարակության մեջ հանցագործության հանրային իրավական գիտակցու-
մը հանրության ամեն անդամի համար հիմք է կատարելու իր քաղաքացիական և
բարոյական պարտականությունը՝ «հսկելու ընդհանուր բարօրությունը»՝ իրեն
հայտնի ամեն հանցագործության դեպք չթողնելով անպատասխան և հանդես գա-
լով իբրև մեղադրող՝ ժողովրդական մեղադրող¹:

Եվ եթե, օրինակ, Հռոմի թագավորության շրջանում արքան հանրային հանցա-
գործություններով (*delicta publica*) ինքն էր հարուցում մեղադրանքը, միջոցներ ձեռք
առնում ապացույցներ հավաքելու և մեղադրյալին դատարան ներկայացնելու հա-
մար², ապա Հանրապետության օրոք արդեն բոլորովին այլ վիճակ է ստեղծվում
քրեական հետապնդման կազմակերպման հարցում: Այս շրջանում արդեն պաշտո-
նատար անձինք չեն ունենում ի պաշտոնե քրեական հետապնդում սկսելու լիազո-
րություն, և եթե չէին գտնվում մասնավոր անձինք, որոնք պատրաստ էին մեղադրո-
ղի դեր ստանձնել, հանցագործությունը մնում էր անպատիժ³:

Ընդ որում՝ քրեական հետապնդման այնպիսի կազմակերպումը, որը վերաց-
նում է պաշտոնատար անձանց կողմից մեղադրանքի իրականացման լիազորու-
թյունը և այն ամբողջությամբ վերապահում մասնավոր անձանց, որոշակի սոցիալ-
քաղաքական պայմաններում *կարող է վկայել հանրային հիմքի գերաճի, հանրային
շահի առավել հետևողական պաշտպանության ապահովման նկրտումների մասին*:

Այսպես, նույն Հին Հռոմում, օրինակ, հանրապետության ուշ շրջանի մագիստր-
ատները, որոնք պաշտոնավարում էին մեկ տարուց ոչ ավելի ժամկետով, առավել-
լապես զբաղված էին քաղաքականությամբ ու կուսակցական տարածայնություննե-
րով և բավարար ուշադրություն չէին հատկացնում ընթացիկ գործերին. այս կամ
այն գործի հանդեպ հազվադեպ ուշադրությունն էլ բխում էր կուսակցական կամ
զուտ սուբյեկտիվ նկրտումներից⁴:

Նման պայմաններում արդեն, հասկանալի է, հանցագործության հանրային ի-
րավական գիտակցությունն ստիպում է հրաժարվել պրոֆեսիոնալ մեղադրանքի
կազմակերպումից:

Մեծանուն իրավաբան-պատմաբան Թ.Մոնզենն այս առնչությամբ անում է
շատ հետաքրքիր դիտարկում. «Նա, ով գիտի Հռոմի վիճակը Հանրապետության
անկման դարաշրջանում, կհասկանա, որ քրեական գործերում մասնավոր նախա-
ծեռնության դրսևորումը նշանակում է ոչ թե պետական ճնշման թուլացում, այլ ընդ-
հակառակը՝ դրա ուժեղացում: Թեև նախկինում մագիստրատները պարտավոր էին
հարուցել հետապնդումներ, բայց նրանց նկատմամբ այդ հարցում, իրենց խղճի
հսկողությունից բացի, չկար ոչ մի հսկողություն, և հնարավոր է, որ մի շարք իրավա-
խախտումներ մագիստրատների անտարբերության պատճառով մնում էին անպա-
տիժ: Accusatio-ի (այսինքն՝ մեղադրանքի – Ա.Ղ.) սկզբունքը, ընդհակառակը, հնա-
րավորություն էր տալիս մեղադրանքով հանդես գալ ոչ միայն ինչ-որ կերպ շա-
հագրգռված յուրաքանչյուր անձի, այլ նաև տարբեր այլ մարդկանց, որոնք այդ
կերպ ոչ հազվադեպ սկսում էին իրենց քաղաքական գործունեությունը»⁵ (ընդգ-
ծումն իմն է – Ա.Ղ.):

¹ Այստեղից էլ առաջանում է մեղադրանքի այս տեսակի անվանումը՝ «ժողովրդական
մեղադրանք» (*actio popularis*):

² St' u, օրինակ, **Петрова Н.Е.** Частное и субсидиарное обвинение. Самара: Изд-во
«Самарский университет», 2004, էջ 11 էջ, **Чельцов-Бебутов М.А.**, նշվ. աշխ., էջ 128:

³ St' u **Покровский И.А.** История римского права. Пг. Изд-е юридическ. книжн. Кл.
«Право». 1918, էջ. 126, մեջբերումն ըստ **Петрова Н.Е.**, նշվ. աշխ., էջ 12:

⁴ St' u **Покровский И.А.** Частная защита общественных интересов в Древнем Риме //
Древнее право. *ivs antiquvm.* - М.: Спарк, 1999, № 2 (5), էջ 198:

⁵ Թ.Մոնզենից մեջբերումն ըստ **Покровский И.А.** Частная защита общественных интересов
в Древнем Риме // Древнее право. *ivs antiquvm.* - М.: Спарк, 1999, № 2 (5), էջ 194:

Հենց հանրային շահի պաշտպանության նպատակով էլ մասնավոր անձանց իբրև մեղադրող հանդես գալը (գոնե սկզբնական շրջանում) խիստ պատվաբեր էր համարվում և, ինչպես արդեն նշվեց, Հռոմի քաղաքացիների բարոյական-քաղաքացիական պարտքն էր¹: Որոշ դեպքերում նույնիսկ այդ «պարտքը» ձեռք էր բերում պարտականության հատկանիշներ (Հռոմում մեղադրանք չներկայացնելը խայտառակություն էր համարվում²):

Ընդ որում, թեև ժողովրդական մեղադրանքով հանրային շահի պաշտպանության օրինակներ բերվեցին միայն հռոմեական ժամանակներից, պետք է արձանագրել, որ այն հավասարապես վերաբերելի է և՛ մայրցամաքային, և՛ անգլոսաքսոնական քրեական դատավարությանը:

Մայրցամաքային և անգլոսաքսոնական քրեական դատավարության տարբեր մոտեցումների, ինչպես նաև գրականության մեջ տեղ գտած հայացքների համադրությամբ դատավարագետ Ա.Ն. Կոզլովան հանրայնության սկզբունքին նվիրված իր առենախոսության մեջ արձանագրում է. «Ինչպես մայրցամաքային, այնպես էլ անգլոսաքսոնական քրեական դատավարությունում *հանրային հիմքի ծնունդը տեղի էր ունեցել ժողովրդական մեղադրանքի ձևով*»³ (ընդգծումն իմն է - Ա.Ղ.):

Այստեղ արդեն մենք մոտենում ենք մի հարցի, որի կողքով չենք կարող անտարբեր անցնել:

Գրականության մեջ գոյություն ունի մի տեսակետ, ըստ որի՝ ժողովրդական մեղադրանքով հանրային շահի պաշտպանության կազմակերպումը հնարավոր է միայն վաղ, դեռևս չզարգացած հասարակություններում, և «պետականության սկզբունքի զարգացվածության ու ամրապնդվածության պայմաններում արդեն թույլ չի տրվում քրեական հետապնդումը թողնել մասնավոր անձանց ձեռքում, և դրանում տեսնելով պետական իշխանության անբաժան մասնիկ՝ այն հանձնվում է դատախազությանը»⁴:

Նման դիտարկման հետ եթե նույնիսկ կարելի է համաձայնել, ապա որոշակի վերապահումներով:

Իսկապես, մեր ժամանակներում արդեն դժվար է գտնել մի պետություն, որտեղ քրեական մեղադրանքը կազմակերպված լինի **հիմնական ժողովրդական մեղադրանքի ձևով**, այսինքն՝ ժողովրդական մեղադրանքի, որը «դուրս է մղում» պետական (պրոֆեսիոնալ) մեղադրանքը (ինչպես, օրինակ, որոշ ժամանակ այն տեղ էր գտել Հռոմում):

Սակայն դա չի նշանակում, որ զարգացած հասարակություններում ժողովրդական մեղադրանքը տեղ չի կարող գտնել **լրացնող և սուբսիդիար** մեղադրանքի ձևով:

Ավելին, հենց հասարակության զարգացման արդյունքում գիտակցվում են պետական մեղադրանքի մենիշխանության հնարավոր վտանգները (արդյունավետության անկում, քրեական հետապնդման կազմակերպման սակավ միջոցներ, պետական մեղադրանքի հնարավոր չարաշահումներ, հասարակության ազատության

¹ Տե՛ս, օրինակ, **Гуцев В.Е., Александров, А. С.** Народное обвинение в уголовном суде. Н.Новгород: НЮИ МВД РФ, 1998. (http://kalinovskiy-k.narod.ru/b/aleksandrov_1998/2.html#22):

² Տե՛ս, օրինակ, **Васильева Е.Г.** Уголовный процесс: догматико-аксиологическое исследование. Монография. М.: Юрлитинформ, 2013, էջ 274: Թ. Մոմգենի վերոհիշյալ դիտարկումն էլ փաստում է, որ մասնավոր անձի կողմից «պարտքի», «պարտականության» խոր գիտակցումն էլ կարող է քաղաքական գործունեություն ծավալելու լավ գրավական լինել:

³ Տե՛ս **Козлова А.Н.** Публичность как принцип уголовного судопроизводства: дис. ... к.ю.н., Москва, 2007, էջ 97:

⁴ Տե՛ս **Муравьев Н.В.** Прокурорский надзор в его устройстве и деятельности: Пособие для прокурорской службы. Т. 1. Прокуратура на Западе и в России. – М., 1889, էջ 13:

հնարավոր սահմանափակում և այլն)¹: Հենց այդ է պատճառը, որ ավանդաբար պետական մեղադրանքի «գերիշխանության» տակ գտնվող այնպիսի երկրներում նույնպես, ինչպիսին է, օրինակ՝ Չեռնանիան, դեռ 1800-ականների երկրորդ կեսից սկսում է իրավաբանական շարժում գերմանական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի ներդրման ուղղությամբ²:

Թերևս հենց պետական մեղադրանքի մենիշխանության վտանգների գիտակցումն է պատճառը, որ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, ինչը թեև առավել բնութագրական է անգլոսաքսոնական քրեադատավարական համակարգի

¹ Անգլիայում դեռևս Հենրիի VIII-ի (1509 – 1547թթ.) կառավարման տարիներից սկսած հանրային (պետական) մեղադրողների ազգային համակարգ ստեղծելու բազմաթիվ փորձեր են արվել (Տե՛ս **P. Burns**, Private Prosecutions in Canada: The Law and a Proposal for Change. էջ 272(<http://lawjournal.mcgill.ca/userfiles/other/8090603-burns.pdf>)), և մինչ 1879թ. չկար «մայրցամաքային» պատկերացումներին համահունչ պետական այնպիսի մարմին, որ պետության անունից պետք է իրականացնեք քրեական հետապնդում: Ընդ որում՝ այդպիսի միասնական, պետական մարմնի բացակայությունը ուներ մի շարք պատճառներ, որոնք չէր կարելի կապել հասարակության ոչ զարգացած լինելու հետ: Այն պայմանավորված էր անգլիացիների ազատությամբ, հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցությամբ, պետական մեղադրանքը իբրև ազատությունը սահմանափակելու հնարավոր գործիք դիտարկելու և այլ հանգամանքներով:

Այս առումով հետաքրքիր է Կ. Միտերմայերի այն դիտարկումը, որ «եթե ժողովրդի մեջ կա ազատություն, հասարակական կյանք, եթե քաղաքացիները անձամբ մասնակցություն են ցուցաբերում հասարակական գործերում, և, միևնույն ժամանակ, եթե կա համոզումը, որ քրեական դատավարությունը կարող է չարաշահման դեպքում դառնալ վտանգավոր գործիք ազատության սահմանափակման համար, ապա քրեական դատավարությունը կստանա այն բնույթը, որն այն ունի Անգլիայում: Պետական իրավունքը այդ ժամանակ կարող է հասարակական միավորումների և մասնավոր անձանց վրա հույս դնել, որոնք հանցագործություններ կատարելու դեպքում հետապնդում են դրանք հանրության շահից ելնելով և օժանդակում են մեղավորներին պատժելուն»: (Տե՛ս **Миттермайер К.Ю.А.** Законодательство и юридическая практика в новейшем их развитии в отношении к уголовному судопроизводству / пер. В. Бартенева. СПб.: Типография Правительств.Сената, 1864, էջ 233-234):

Այստեղ տեղին է մեջբերել մեկ այլ դիտարկում ևս. «Ընդհանուր կարծիք կար, թե պաշտոնատար անձանց՝ քրեական օրենքի նկատմամբ հսկողություն վերապահելով՝ հնարավոր չէ դրա իրացումն ապահովել: Ավելի նախընտրելի է, որ մի քանի ստահակ ազատ արձակվեն, և մի քանի անմեղներ զրկանքներ կրեն կեղծ մեղադրանքներից, քան թեկուզ ոչ հիմնավոր ինչ-որ կասկածի հիմք ստեղծվի, թե քաղաքական դրդապատճառները (տեքստում՝ երաշխիքներ - Ա.Ղ.) տեղ են գրավում կամ կարող են տեղ գրավել քրեական արդարադատության իրականացման մեջ»: (Մեջբերումն ըստ՝ **Муравьев Н.В.** նշվ.աշխ., էջ 224):

Բազմաթիվ այլ ապացույցներ կան, որ «գզուշավոր» ու պահպանողական Անգլիայում այդ ժամանակ թեև գիտակցում էին դատախազության (պետական մարմնի) օգտակարությունը, բայց «հապաղում էին» ցանկանալով համապատասխանեցնել այդ կառույցը իրենց երկրի ներքին դատարանակազմությանը և քաղաքական կառուցվածքին (Տե՛ս, օրինակ, **Муравьев Н.В.** նշվ.աշխ., էջ 223-229):

² Տե՛ս **Полянский Н.Н.** К вопросу об участии частных лиц в публичном обвинении (Принципиальная основания actio popularis в уголовном процессе) // Юридический вестник. Кн. IX (I), 1915:

երկրներին¹, ներկայումս տեղ է գտնում նաև մայրցամաքային քրեադատավարական համակարգի այնպիսի երկրում, ինչպիսին Իսպանիան է²:

Նետևաբար, կրկնում ենք, ժողովրդական մեղադրանքի հնացած, «հետամնաց» լինելու մասին պնդմանը կարելի է համաձայնվել միայն *հիմնական* ժողովրդական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպման մասով՝ արձանագրելով, որ ներկայումս էլ հնարավոր է և շատ զարգացած երկրներում շարունակում է գոյություն ունենալ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, որով էլ իրականացվում է հանրային շահերի արդյունավետ պաշտպանություն պրոֆեսիոնալ մեղադրանքի հետ տարատեսակ զուգակցումներով:

Կատարված վերլուծության հիման վրա փորձենք որոշակի եզրահանգումներ անել:

Մասնավոր անձանց կողմից իրականացվող մեղադրանքը կարող է կազմակերպվել երկու ձևով՝

1. Մասնավոր մեղադրանքի՝ տուժողի (նրա ընտանիքի անդամների և այլն) կողմից իրականացվող մեղադրանքի ձևով, որն *ուղղակիորեն իրականացվում է տուժողի (նրա ընտանիքի անդամների) մասնավոր շահերի պաշտպանության նպատակով*:

2. ժողովրդական մեղադրանքի՝ հանրության (քաղաքացիների, նրանց միավորումների) կողմից իրականացվող մեղադրանքի ձևով, որն *անմիջականորեն ուղղված է հանրային շահի պաշտպանությանը*:

Նենց մեղադրանքով պաշտպանվող շահն է դառնում այն հիմնական չափանիշը, որով միմյանցից տարբերվում են մասնավոր անձի (անձանց) կողմից իրականացվող այս երկու մեղադրանքները՝ մասնավոր և ժողովրդական մեղադրանքները³:

¹ Մեծ Բրիտանիայում ավանդաբար գործող ժողովրդական մեղադրանքն այժմ իր ամրագրում է ստացել «Հանցագործությունները հետապնդելու մասին» օրենքում (Prosecution of Offences Act 1985) (<https://www.legislation.gov.uk/ukpga/1985/23>), որում մասնավորապես նշվում է, որ ոչինչ չպետք է խոչընդոտի յուրաքանչյուր անձի համար հարուցել կամ շարունակել ցանկացած քրեական հետապնդում այն դեպքում, երբ Տնօրենը չի կիրարկել քրեական հետապնդման իրացման իր լիազորությունը (6-րդ հոդված):

² Իսպանիայի քրեական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածով սահմանվում է, որ բոլոր քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված կարգով քրեական հայց հարուցելու և այն պաշտպանելու իրավունք: Նույն օրենսգրքի 270-րդ հոդվածը իր հերթին մասնավորեցնում է, որ Իսպանիայի բոլոր քաղաքացիները, անկախ այն հանգամանքից նրանք համապատասխան հանցագործությունից տուժել են, թե ոչ, իրավունք ունեն բողոք ներկայացնելու՝ գործադրելով 101-րդ հոդվածով նախատեսված ժողովրդական հայցը (մեջբերումն ըստ **Головки Л.В.** Материалы к построению сравнительного уголовно-процессуального права: источники, доказательства, предварительное производство // Труды юридического факультета. Кн. 11. – М.: Правоведение, 2009. էջեր 300-301):

³ Այստեղ մենք «մասնավոր շահ» և «հանրային շահ» կատեգորիաները գործածում ենք ոչ թե քրեադատավարական քաղաքականության, այլ քրեադատավարական տեխնիկական իմաստով: Եվ եթե առաջինի դեպքում օրենքով պաշտպանվող ցանկացած շահ ստանում է հանրային բնույթ (այդ թվում՝ վարույթի մասնակիցների մասնավոր շահը), ապա քրեադատավարական տեխնիկական իմաստով արդեն հանրային շահը ենթադրում է ոչ թե ցանկացած շահ, որը ամրագրվել է օրենքով և այդպիսով անուղղակիորեն ձանաչվում է պետության կողմից, այլ շահ, որի վերաբերությամբ պետությունն (հանրությունը) է հանդես գալիս իբրև անմիջական կրող, «և որի անհատական հասցեատերը չի կարող անձնավորվել»: Ինչ վերաբերվում է մասնավոր շահերին, ապա պետք է փաստենք, որ դրանք քրեադատավարական քաղաքականության իմաստով թեև «հանրային բնույթի» են, սակայն քրեադատավարական տեխնիկական իմաստով ունեն մասնավոր բնույթ և իրավաբանական-տեխնիկական տեսանկյունից օրենսդրի կողմից ձևակերպվում են իբրև մասնավոր շահեր, այսինքն՝ «անձնավորվող շահեր, որոնք մտցվում են և դիտարկվում իբրև անձի իրավական կարգավիճակի

Եվ քանի որ ժողովրդական մեղադրանքը իրականացվում է *անմիջականորեն հանրային շահի* պաշտպանության նպատակով, այստեղ արդեն այն սկզբունքորեն տարբերվում է մասնավոր մեղադրանքից. ժողովրդական մեղադրանքի դեպքում մենք գործ ենք ունենում *մասնավոր անձի կողմից իրականացվող հանրային հետապնդման հետ*:

Տվյալ դեպքում հանրային և մասնավոր հետապնդման տարանջատման հիմքում դրվում է *ոչ թե անձը* (սուբյեկտային հատկանիշը, որը, ինչպես տեսանք, երկու դեպքում էլ կարող է լինել մասնավոր մասնակից), այլ *հետապնդմամբ անմիջականորեն պաշտպանվող շահը*:

(մասնավոր անձի) բաղկացուցիչ մասնիկներ» (այս մասին առավել մանրամասն տե՛ս **Козлова А.Н.** նշվ. աշխ., էջ 123-135 էջեր):

Այս առումով հետաքրքիր է պրոֆեսոր Լ.Վ. Գոլովկոյի պատասխանը իրեն քննադատած դատավարագետ Ա.Վ. Սմիրնովին. «Ա.Վ. Սմիրնովը, ժխտելով «ապահանրայնացումը» կոնկրետ այս դեպքի վերաբերությամբ (խոսքը տուժողի իրավունքների ընդլայնման, քրեական դատավարությունում նրա դերի բարձրացման մասին է – Ա.Ղ.), իզուր չի տարանջատում քրեադատավարական տեխնիկական և քրեադատավարական քաղաքականությունը:

Տեխնիկական տեսանկյունից տուժողի դերի մեծացումը ... անկասկած հակադրվում է ex officio սկզբունքին... Այլ բան է, որ այդպիսի «**ապահանրայնացումը**» (տուժողին ուղղված), **որքան էլ որ տարօրինակ է, ամբողջովին հանրային է սոցիալական տեսանկյունից: Բայց սա արդեն քրեադատավարական քաղաքականություն է...** Նույն կերպ էլ մասնավոր իրավունքը, ուզենք դա, թե ոչ, հանրային է այն իմաստով, որ գործարկվում է (իբրև իրավունք՝ օբյեկտիվ իմաստով) ամբողջ հանրության, ինչպես նաև պետության շահերից ելնելով: Բայց այդ ամենով հանդերձ մենք չենք դադարում ընդունել դրա մասնավոր բնույթը (իրավաբանական-տեխնիկական իմաստով)» (Տե՛ս **Головки Л. В.** Альтернативы уголовному преследованию в современном праве. – СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2002. էջ 50):

Նենց քրեադատավարական տեխնիկական և քրեադատավարական քաղաքականության տեսանկյուններից «հանրային և մասնավոր շահ» կատեգորիաների հստակ տարանջատման բացակայության պատճառով էլ գիտության մեջ հնչում է տեսակետ, որ «քրեական դատավարությունում մասնավոր շահը օրենքում դրա ամրագրվելու կամ դրա՝ օրենքի նորմին չհակասելու պայմանում ունի ապրելու իրավունք: Բայց այդ դեպքում մասնավոր շահը ձեռք է բերում հանրային բնույթ, որովհետև ցանկացած օրենքի նորմ հանրային է, քանի որ ուղղված է բոլորի բարօրությանը» (տե՛ս Масленникова Л.Н. О соотношении общественных и публичных интересов в уголовном судопроизводстве // духовность, правопорядок, пресупность, материалы научно-практической конференции, մեջբերումն ըստ **Козлова А.Н.** նշվ. աշխ., էջ 126-127):

Միևնույն ժամանակ, տարանջատելով «հանրային և մասնավոր շահ» կատեգորիաները քրեադատավարական տեխնիկական իմաստով և դրանց որոշ դեպքերում «հակադրությունը» ընդունելով, չենք բացառում նաև, որ **ուղղակիորեն** գործելով հանրային շահի ապահովման և պաշտպանության նպատակով՝ հնարավոր է նաև **անուղղակիորեն** պաշտպանել մասնավոր շահերը և հակառակը՝ **ուղղակի** գործելով մասնավոր շահերով՝ **անուղղակիորեն** ապահովել հանրային շահի պաշտպանությունը:

Նենց այդ է պատճառը, որ նույնիսկ ներկայումս հանցագործության հանրային իրավական ընկալման գիտակցության առկայությունը ոչ մի կերպ չի խանգարում մասնավոր և ժողովրդական մեղադրանքների տարանջատման գործում առաջնորդվել հիմք ընդունելով պաշտպանվող առաջնայինը՝ «շահի» չափանիշով: Բանն այն է, որ մասնավոր մեղադրողը, ինչպես արդեն նշեցինք, գործում է **ուղղակի** իր անձնական, մասնավոր շահերով, որը չի բացառում նրա անձնական շահերի համընկնում (արդեն **անուղղակիորեն**) հանրային շահի հետ:

Վերը նշված հանգամանքները հաշվի չառնելու պատճառով էլ թերևս կարելի է բացատրել որոշ դատավարագետների հետևյալ պնդումը. ««Մասնավոր» տերմինի օգտագործումը մեղադրանքի վերաբերմամբ սկզբունքորեն սխալ է, քանի որ մեղադրանքը միշտ հանրային է՝ հանցագործությունը օրենսդրորեն իբրև հանրային-վտանգավոր արարք ամրագրելու ուժով» (տե՛ս, օրինակ, **Петрова Н.Е.**, նշվ. աշխ., էջ 64):

Նման մոտեցման պարագայում կարող է հանրային մեղադրանքը կազմակերպվել ինչպես պետական (պաշտոնական), այնպես էլ մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի (այսինքն՝ ժողովրդական մեղադրանքի) ձևով: Իսկ ահա մասնավոր մեղադրանքը կարող է իրականացվել միայն և միայն վարույթի մասնավոր մասնակցի (տուժող, նրա ներկայացուցիչ և այլն) կողմից (քանի որ վարույթի հանրային մասնակիցները գործում են *անմիջականորեն հանրային շահերի ապահովման համար*, և եթե նրանց կողմից իրականացվող հետապնդմամբ անուղղակիորեն ապահովվի տուժողի մասնավոր շահերի պաշտպանություն, մենք չենք ունենա մասնավոր հետապնդում, քանի որ կբացակայի նշված երկու մեղադրանքների տարանջատման վերը բերված *անմիջականության* հատկանիշը):

Այսպիսով՝ թեև հանցագործության մասնավոր իրավական ընկալումը «ծնունդ է տալիս» մասնավոր անձի կողմից իրականացվող մասնավոր մեղադրանքին և ժամանակագրական առումով ավելի առաջ է ընկնում ժողովրդական մեղադրանքից, սակայն պետք է փաստել, որ մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքն ընդհանրապես հանցագործության մասնավոր իրավական ընկալման իմասենտ հատկանիշ չէ¹:

Ընդհակառակը՝ այն մի ունիվերսալ միջոց է, որով հնարավոր է իրականացել ինչպես անմիջականորեն մասնավոր շահերի պաշտպանությանն ուղղված քրեական հետապնդում (մասնավոր մեղադրանք), այնպես էլ անմիջականորեն հանրային շահերի պաշտպանությանն ուղղված քրեական հետապնդում (ժողովրդական մեղադրանք):

¹ Այս առումով, համաձայնելով Ա.Վ.Սմիրնովի այն դիտարկմանը, որ մեղադրելու մասնավոր միջոցը ոչ թե բխում է հանցագործության «մասնավոր» նշանակությունից, այլ քրեական հետապնդման հատուկ մարմնի բացակայությունից, չենք կարող կիսել նրա մյուս տեսակետը, որ միշտ էլ առկա է եղել հանցագործության հանրային-իրավական ընկալում: (Տե՛ս **Смирнов А.В.** նշվ.աշխ., էջ 40):

Մենք փորձ արեցինք ցույց տալ հանցագործության մասնավոր-իրավական նշանակության և մասնավոր անձի կողմից իրականացվող հետապնդման (կոնկրետ այս դեպքում՝ դրա հնագույն տեսակի մասնավոր մեղադրանքի) «կապը»՝ երկրորդի ծնունդը պայմանավորելով առաջինով, սակայն այդ «կապն» իր հերթին այնքան «ամուր չէր», որ առաջինի «մասկամբ» վերանար և ինքը՝ մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը:

Ինչ վերաբերվում է հանցագործության հանրային իրավական ընկալումը մշտապես գիտակցելուն, ապա մենք չենք կարող համաձայնել այդպիսի պնդմանը, քանի որ նման ընկալումը, ինչպես նկատեցինք, հանգեցնում է քրեական դատավարությունում հանրային շահի գիտակցման և որպես հետևանք՝ քրեական հետապնդման հանրայնացման: Եթե այդ գիտակցումը լիներ ի սկզբանե, ապա քրեական դատավարությունը չէր անցնի «հանրայնացման» երկար պատմական ճանապարհ:

ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ МОДЕЛЕЙ ОБВИНЕНИЯ, ОСУЩЕСТВЛЯЕМЫХ ЧАСТНЫМ ЛИЦОМ

Артак Казарян

Аспирант Образовательного комплекса полиции Республики Армения

В статье представлены причины возникновения обвинения, которое осуществляется частным лицом, ее историческое развитие. Автор выделяет два типа обвинений, осуществляемых частным лицом: частное обвинение и народное обвинение, которые дифференцированы на основе интересов, непосредственно защищенных уголовным преследованием. В статье автор также обсуждает вопрос, исключает или нет понимание публично-правового значения преступлений обвинение осуществляемое частным лицом.

HISTORICAL DEVELOPMENT OF ACCUSATION MODELS MADE BY PRIVATE PERSON

Artak Ghazaryan

Postgraduate student of the Educational Complex of the Police of the RA

The article covers the creation causes and the development of accusation made by private person. The author differentiates two types of accusation made by private person – private and public, based on the interest directly defended by criminal prosecution. In this article author also discusses the issue, whether the public legal perception of the crime excludes the accusation made by private person, or not.

Բանալի բառեր – մասնավոր մեղադրանք, ժողովրդական մեղադրանք, տուժող, հանրային շահ, մասնավոր շահ

Ключевые слова: частное обвинение, народное обвинение, потерпевший, публичный интерес, частный интерес

Key words: private prosecution, public prosecution, victim, public interest, private interest